

Ժուռ դալով կը ժողովէ . մերթ այս և  
մերթ այն բոյսին կը քսուի . մերթ այս  
և մերթ այն ծաղկին բաժակը կը մըտ-  
նէ , ուստի աւարով լցուած՝ ուրախու-  
թեամբ տուն կը դառնաց՝ իր գանձը  
ապահովցնելու . վասն զի նախահոգ է .  
դիաէ որ պիտի դայ ժամանակ մը , որ  
ալ երկիրն իրեն կերակրիկը զվանայ  
պիտի , և ան ատեն ինչով պիտոր ապ-  
րի , թէ այժմ որ բնութիւնը դեռ ա-  
ռոյդ , մատղաշ է՝ չփութայ ամբարե-  
լու : Այսպէս այլ և այլ միջոցներով

բնութիւնը տրվեցուցած է միջատին  
իր պիտոյքը հոգալ . և նա որ թուչունը  
շմոռնար , այլ անոր ոգեպահիկն 'ի ժա-  
մանակին կու տայ , այսպէս ալ զամե-  
նաշնին միջատը՝ որչափ և անարդ ե-  
րենայ մեր առջին՝ ոչ երբէք կրնայ  
մոռնալ :

Հետևեալն որիշ անգամ :

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏՅԵՆՑ

## ՅԵՏԻՆ ԴԱՏԱՄԱՏԱՆ

### ՏԱՂ

« Լաւութիւնքդ այդ անընդեկը զնը ձեզ բարիս առթեցին ,  
« Ո' արդարը . դուք ասացէք . Տէր է պաշտպան մեր եւ հայր .  
« Եւ ճընշեակը ընդ բընաւ՝ թաւալ յածիք վըշտագին  
« Ընդ ոտիւք չարագործացն յօրացելոց խրոխտաբար :  
« Առ ին պահպան արկէք հայցուած .  
« Զինեացէ թող զիւր վրէժ՝ իւրոց որդւոցն օգնական .  
« Արդեօք կոյլը եւ խուլ իցէ , կամ յուխտ մըտեալ միակամ  
« Ընդ զըրկողաց և ամբարըշտաց :

« Կարկեցարնք հայհոյիչք ժանտք .  
« Ի լուտանս արդեօք նըմին ձեզ պարգեւեաց նա բարբառ :  
« Յիրաւի հարկանէ զմեզ . այլ օրինացըն պատկառ՝  
« Մըտադիւր մեք ըսպասեմք մինչ նոյն հասցեն ձեզ հարուածք :  
« Արփին , վըկայ մերս արտասուաց ,  
« Զօր իւրումն արդարութեան հասուցանէ ճեպըշտապ :  
« Յաւոցը՝ Տէր հատուացէ վարձ .  
« Եկեսցէ Տէր ի վրէժ պարծող չարին յաղթութեամբ :  
« Թո՞ղ դայցէ ուրեմն Աստուած , թէ լեալ իցէ ինչ երբէք .  
« Լաւութիւնք յորմէհետէ կան աղիտից նըշաւակ ,  
« Թըշուառն կարդայ , եւ չիք լըսող ոք ուրեք .  
« Նընջէ նա յերկնիցն 'ի խոր՝ ըզլուռ շանթից կայծակամք :  
« Ա՞յս է Աստուածն այն մեծագութ .  
« Եւ յուսամք դուք տակաւին թէ զարթիցէ նա համբուն :

« Օ՞ն , լերուք մեզ նըմանողք . Եւ մինչ նիրհէ դեռ ի քուն ,  
« Զար գործեցէք անվիշտ յանքոյթ » :

Զի՞նչ գոշումն այդ բարբառոյ . քաջահընչող փողոյն ձայն  
Գոռաց զորոտն ի բնաւ ծագաց .

Եւ շանդ լավիլիզող պանայ կառօքն հրակերպեան  
Զերերագին օդովք բարձանց :

Այդ աստեղք արինազանդք , Եւ պատերազմի ահաղին  
Գոռ մըրըրկաց կապակոտոր ,  
Մի գուցէ աղդ առնիցեն , աւաղ , մարդկան երկրածին  
Զտիեզերաց հուսկ վերջին օր :

Ովկիան սարտուցեալ վաղէ յալիցն իւր ի բաց .  
Եւ կոհակօքն ամբոխալից

Դիմէ թընդմամբ ի թոպ դ' երկնից ,

Ոյր անհուն փլատակք ընդ հուպ զայն ծածկեսցեն թանձրամած :  
Արդ եհաս կատարած . բարձրեալն ի յայպն ընդ երկար՝  
Թողու զգիշերըն խորին ,

Ուր անտես յաշաց մարդկան յանդորր հանդչէր ի գաղար :  
Երեւեցաւ . նա ինքն ահա . աշխարհ բախմամբ իւր ոտին  
Փըշրեալ բեկաւ դիր եւ տար :

Սարսեցէք , մահկանացուք . դատաւորին գերագոյն  
Ահա ատեանն երկիւղալիր :

Աստ դընին արհամարհ ճաճանչք թագին եւ ոսկւոյն .

Ընդ այր եւ այր աստ չիք խըտիր :

Աստանօր ճըշմարտութիւն ունի զմատեանն ահատր .

Ուր ձեր ոճիլք դըրոշմեալ կան .

Եւ կըրօնք , երբեմըն մայր գորովագութ բազմաշնորհ ,

Պըղնձի վառի աղեօք ընդդէմ որդւոցն անըզգամ :

Զյաւխտենից թողէք դիշեր  
Մեռեալ ոգիքդ համանդամայն .

Եւ ձեր մարմնովը սեփական

Յանդիման ցեառըն լերուք . հրաւէր տայ ձեզ ինքնին ցէր :

Անդ ըզթըմբիր թափեալ ցըրտին

Պակուցմամբ ոստնուն մեռեալք ի մուայլ ծոցոյն ըստուերաց .

Խառն ի խուռն յառաջեն հուպ առ բարձրեալն յաւխտեանց ,  
Դալկահար ըզփոշի թօթափելով տապանին :

Ո՞վ Սիոն, քանիօն յանմահականդ օթեւան  
Ակըմբին ի պահուս ազգք եւ ազինք ի դողի.  
Այլազգի եւ հրէայ, հաւատացեալ ւ' անհաւան  
Ժողովին համախըմբեալ միայնոյ Տեառն առաջի:  
Ո' աղմուկ զարհուրելի, ո' աղաղակ լալական.  
Ա՛հ, եւ ո' զմեղաւորսն հաշուել իցէ բաւական.  
Ապերախտին աստ առ երի  
Թանգուզին զըրպարտողք եւ մարդասպանք եւ կըծծիք,  
      եւ այն նենգող մատնիչ ռազմիկ  
Որ եհան ի վաճառ ըզհայրենիսն յօր մարտի:  
  
Դատաւորքդ այդոքիկ անմեղ արեան գինս հատին  
      ընդ աննըւէր հալածողաց.  
      եւ կեղծ անուամբ բարերարաց  
Խշանքդ ընդ պարզեւաց խառն ըզչարիս սրփուէին:  
Արդ յո' ձեր թաքուստ եւ ճեպ, վանեաք յաշաց վրէժխընդիր,  
Հուղկահարք, երբեմն արքայք, եւ արդ թափուրք ի թագէն:  
Կան տապալ այրք եւ անձաւք եւ տիեզերք լայնածիր.  
      Ըզբնաւս ելից գերագոյն ին:  
  
Յանցաւորքդ, օն մատերուք:  
Աւուրք գըթութեան ի շրդայիցըն տարեաց  
      Խըզեալ հատան ուրեմն արդ հուսկ:  
Արարէք, այպն արարէք ըզգերարտօսր անմեղաց.  
      Տոք ձայն. նընջէ Աստուած նոցուն:  
Լայք ուրեմն. ընդունայն ցաւք. ընդ ձերդ հըրճուխմք մեք աշխար:  
Համախումբ ըզձեղ բաժին Տէր առ հրեշտակ ետ մահուն,  
      եւ զիւր գըժոխք խընդրէ աւար:  
  
Այլ ուստ այս զի լիւղամ ես ընդ ալիս պաղպաջուն.  
      Բարէ, յանկամն ընդ վինս յածեալ ցիր թափառ.  
Մատունք իմ դաշնակաւորք ոգեն ըզհեշտ քաղցրութիւն.  
      Օ՛ն, խոյս տուք, չարք, կացեալ խանդիցս իմ պատկառ:  
Ահա ընտրեակըըն Բարձրելոյն  
Ճեմեն զուարթադէմ ընդ խոր դարիր սըրբավայր:  
Եւ իցէ որդեկաց գիտել բընաւ զահ եւ հոյն  
      Մինչ յառաջեալ մատչին առ հայր:  
  
Յայդշափ ի մարդկանէ զոր սընուցեր դու գըթած  
Ո՞վ երկին, սոսկ դոյզն այդ խումբ հըլու՝ ըզկամն ընթադրեաց

Ընդ գերապանծ վեհու օրինաք .

Եկեղեց միայն , մատաղ մանկուի , եւ ապիկարք չարաբախու :  
Իմ հաղիւ նըշմարեն աչք անդ առ բիւրուք արդարոք  
Զոյդ ճակատուց պըսակազարդ :

Զի եղև մեղապարտ ազգաց խուժան ամրոխին  
Իւ Սիոնի ծածկէին դաշտք :  
Խօսեցաւ Ամենակալն . ընդ բարբառոյն ահագին  
Ի դըժոխոյ սուզան յատակ :  
Անդանօր դատապարտեալ անկանին քոյր եւ եղբայր ,  
Ելնողն ընդ որդւոյն , ի միասին դուստր եւ մայր .  
Բարեկամք եւ տարիխաւորք եւ ամուսինն եւ փեսայն .  
Թադաւորք եւ մարդելոյզք , ազատատեարք եւ ծառայք .  
Փաղանդ չարագործաց յայտանախատ խայտառակ ,  
Եւ մատնեալք յաւէժաբար աստուածասաստ բարկութեան :

Հուսկ ի վերջէ փայլէ արդարն յաղթաղդեաց .  
Եւ յերկար պատերազմայն՝ ի ծոց էին անմահի  
Հանդչի խաղաղ , շուրջ պարուրեալ ի փառաց :  
Ի վայելս իւր պատարուն բընաւ ինչ չկը ցընդելի .  
Տեսեալ ըզդայ եւ ճանաչէ եւ շընչէ  
ԶԱստուածն ում ծառայեաց , սիրեալ ըզլուծն ի սըրտէ .  
Լըցեալ նովաւ՝ երգէ զբարեաց իւր պարդեւ :  
Խորտակեաց յաւէժըն Տէր զումպէտ շանթիս կայծականց .  
Անդ խապառ թօթափեալ ըզդերանդին եւ ըզթեւ  
Ժամանակն անշարժ լըոին նընջէ յաւերս աշխարհաց :

ՃԻԼՊԵՐ

ԹԱՐԴՄ. Հ. ՍԱՄ. ԿԱՅՍԵՐԵԱՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՓՈՎԲԻ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅԱ

ՄԱԱՅՈՐԴՔ ԱԿԵՐԱԱՑ ՆԱԽՈՅՑ ԶՄԻՒՌՆԻՑ . — Յաւերակաց հին շինուածոց երևելլիք են 'ի Զմիւռնիա , Դուեակն մեծ 'ի գագաթ լերինն Պագոսի , որ է 'ի թիկանց քաղաքին ակներեւ ամենայն ուստեք , և 'ի Տաճկաց կոչեցեալ Խայտելք գալէսի . որոյ 'ի հիւսիսոյ , յարեւմոից և 'ի հարաւոյ անթերի կան պարիսպքն , միւսոյ կողմանն կիսով չափ բարձրութեանն և ուրեք մինչև ցյատակն կործանեալ : Ի հասարակ քարանց է բովանդակ պարիսպն ստուար թանձրութեամբ . և ուրեք ու-